



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

ԹԵՄԱ՝ Արդյունավետ ներառումը մաթեմատիկայի դասաժամերին
փորձարարական և հետազոտական աշխատանքների միջոցով

ԱՌԱՐԿԱ

Մաթեմատիկա

ՀԵՂԻՆԱԿ

Սալմոյան Էմմա

ՄԱՐԶ

Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Հայրենյացի միջնակարգ դպրոց»

ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1 Արդյունավետ ներառումը մաթեմատիկայի դասաժամերին փորձարարական և հետազոտական աշխատանքների միջոցով	
1.1 Ներառական կրթության պատմությունը.....	4
1.2 Ներառական կրթության ժամանակակից փորձերը.....	6
1.3 Ներառական կրթությունը Հայաստանում.....	8
1.4 Արդյունավետ ներառումը մաթեմատիկայի դասաժամերին.....	12
Եզրակացություն.....	16
Գրականության ցանկ.....	17

Ներածություն

Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները: Այս ամենով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել արդյունավետ ներառումը մաթեմատիկայի դասաժամերին՝ փորձարարական և հետազոտական աշխատանքների միջոցով:

Աշխատանքի խնդիրներն են՝ ուսումնասիրել ներառական կրթության պատմությունը, ժամանակակից փորձերը և մաթեմատիկայի դասին փորձարարական-հետազոտական աշխատանքների կազմակերպումը ներառական կրթության համակարգում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, ենթագլուխներից եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքը կազմում է համակարգչային շարվածքի 17 էջ:

Գլուխ 1 Արդյունավետ ներառումը մաթեմատիկայի դասաժամերին փորձարարական և հետազոտական աշխատանքների միջոցով

1.1 Ներառական կրթության պատմությունը

Աշխարհում կա մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամությամբ մոտ կես միլիարդ մարդ, որոնք հաճախ սահմանափակված են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական արգելքներով, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից և հնարավորություն չեն տալիս ակտիվորեն մասնակցելու իրենց երկրի զարգացմանը:

Հաշմանդամների մոտ 80%-ն ապրում է զարգացող երկրներում: Վիճակը փոխելու համար անհրաժեշտ է կրթել հասարակությանը և սերմանել հարգանք բոլոր մարդկանց իրավունքների հանդեպ:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձանց համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձանց կրթության նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան և առողջությանը համարժեք ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովումն է:¹

Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների

¹ <http://school170.safe.am>

հետևանքով որբացած երեխաներ և այլն: Աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք-կողքի, նույն դպրոցում և դասարանում: Ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի ներդրումը: Սակայն այս սահմանումը, թերևս, թաքցնում է կրթական ներառում երևույթի բարդությունը: Ներառման սահմանումը ժամանակի ընթացքում փոփոխվել է, ինչի պատճառով ավելի է մեծացել պատշաճ ներդրումների, ռազմավարությունների և չափորոշիչների մշակման պահանջը:²

Ներառական կրթությունը գործընթաց է, որն հենվում է բոլոր երեխաների՝ այդ թվում նաև հատուկ կարիքներ և սահմանափակ հնարավորություններ ունեցող, կրթություն ստանալու իրավունքի վրա:

Ներառումը՝ այսօրվա ըմբռնմամբ, ծագում է հատուկ կրթությունից: Հատուկ կրթության զարգացումն անցել է մի շարք փուլերով, որոնց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամ երեխաների և սովորելու դժվարություններ ունեցող աշակերտների կարիքների բավարարման տարբեր ուղիներ: Որոշ դեպքերում հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությունը, իսկ այլ դեպքերում եղել է լրիվ առանձնացված: Վերջին տարիներին կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակարգերի նպատակահարմարությունը՝ ինչպես մարդու իրավունքների, այնպես էլ արդյունավետության տեսանկյուններից:

Հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքում իմաստավորված մասնակցությունից զրկված լինելն այսօր մեր հասարակության մեջ անհատների առջև ծառայած մեծագույն պրոբլեմներից է:

Դեռևս 115-130 միլիոն երեխա դպրոց չի հաճախում: Նրանց 90 տոկոսն ապրում է ցածր և միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում: Նույնքան մտահոգիչ են նաև դպրոցական համակարգում ընդգրկված այն անհամար երեխաները, որոնք զրկված են որակյալ կրթությունից:

Ներկայումս կիրառվող մեթոդներն ու ծրագրերն ի վիճակի չեն բավարարելու բացառման ենթարկվող երեխաների ու դեռահասների կարիքները: Անցյալում այդ նպատակով առաջարկված էին հատուկ ծրագրերի, հաստատությունների և

² Ներառական կրթության ռազմավարություններ, դասագիրք, 2019, էջ 4:

մասնագետ մանկավարժների օգնությամբ:

Հայ ժողովուրդը պատմության մեջ հայտնի է խոցելի խմբերի հանդեպ իր ունեցած մարդասիրական մոտեցումներով: Հնում եկեղեցին իր վրա է վերցրել հաշմանդամներին և կարիքավորներին կրթելու, հոգ տանելու և ներառելու մեծ գործը: Սակայն խորհրդային տարիներին պատկերը փոխվեց. բացվեցին հատուկ հաստատություններ, և մարդիկ առանձնացվեցին հասարակությունից: Ընտանիքները տարիներով թաքցնում էին նման երեխաների գոյությունը՝ համարելով այն ամոթալի դժբախտություն: Բարեբախտաբար, այժմ պատկերը բավականին այլ է, և զգալի են դրական տեղաշարժերը հասարակության ընկալման և վերաբերմունքի մեջ: Անշուշտ, ոլորտում նշանակալի բարեփոխումներ են կատարվել՝ շնորհիվ մի շարք հասարակական, այդ թվում միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Առաքելություն Արևմուտք, Հույսի կամուրջ), ինչպես նաև գործին նվիրյալ անհատների և ծնողների, ովքեր պայքարել են իրենց երեխաների կրթության իրավունքի և կյանքի որակի բարելավման համար:³

1.2 Ներառական կրթության ժամանակակից փորձերը

Ուսումնական գործունեությունում ներառական կրթությունը իր ուրույն տեղը կգտնի միայն այն ժամանակ, երբ այն դառնա ուսուցիչների մասնագիտական մտածողության մի մասը:

Փորձը ցույց է տալիս, որ ներառական կրթություն իրականացնող մանկավարժները և առհասարակ այլ մասնագետներ ևս միանգամից չեն ընկղմվում իրենց մասնագիտական նոր դերի մեջ: Նրանք անցնում են մի քանի փուլերով՝ սկսած բացահայտ կամ թաքնված դիմադրությունից, անցում են կատարում կատարվելիքի պասիվ, իսկ հետո նաև ակտիվ ընդունման:

Մասնագետներն ունենում են վախի զգացում. «Կարո՞ղ եմ ես այն անել»: Նրանց խանգարում է նաև ռիսկի գործոնը, նրանք վախենում են պատասխանատվությունից, իրենց մոտ կա վախ չկարողանալ անել այն, ինչ պետք է, և կորցնել աշխատանքը: Վախն ու անորոշությունը կախված է մասնագետների մտավախությունից. չկարողանալ վերահսկել այն ամենն, ինչը տեղի կունենա, և դիմեն այլ

³ Պետրոսյան Սյուզաննա, Ներառական կրթությունը գործնականում, Երևան 2018, էջ 7:

մասնագետների կամ ծնողների օգնությանը և ընդունել այն փաստը, որ իրենք չունեն բոլոր հարցերի պատասխանները:

Յուրաքայուր մասնագետ գիտի է, որ վախ կա, բայց կոնկրետ ինչից է վախը, չի կարող հասկանալ: Սովորաբար այն զգացքումը տևում է մոտ վեց շաբաթ (ճգնաժամից դուրս գալու ժամանակահատվածն է): Ներառումն իրենից ներկայացնում է մեծ փոփոխություն, իսկ ցանկացած փոփոխություն վախեցնում է բոլորին: Բայց այս դեպքում պարտավոր ենք ընդառաջել փոփոխություններին: Ուղղակի այսպիսի ճգնաժամերի ժամանակ մարդուն աջակցել է հարկավոր:

Այսօրվա դրությամբ միայն յուրաքանչյուր չորրորդ մանկավարժն է ծանոթ ներառական կրթության հիմնական դրույթներին: Մանկավարժների 75%-ը կամ ծանոթ չեն ներառական կրթության հիմնական դրույթներին և սկզբունքներին, կամ հայտարարում են, որ տեղեկատվությունը այդ հարցի վերաբերյալ շատ քիչ է: Հաշվի առնելով, որ ՀՀ դպրոցները իրենց գործունեությունը պատրաստվում են կառուցել՝ հիմնվելով ներառական կրթության սկզբունքների հիման վրա՝ պահանջմունք է առաջանում հանրակրթական դպրոցի մանկավարժներին իրազեկել ներառական կրթության սկզբունքներին և ներառական պրակտիկայի հաջող փորձին, ինչը թույլ կտա ուսուցիչներին ընդունելու նոր պահանջները և հասկանալու փոփոխությունների անհրաժեշտություն:

Հանրակրթական դպրոցի մանկավարժների մտավախությունը կայանում է նաև նրանում, որ իրենք ունեն շտկողական մանկավարժության բնագավառում սեփական գիտելիքների պակաս, ինչպես նաև զարգացման խախտումներով երեխաների հետ աշխատելու մեթոդներին և ձևերին ծանոթ չլինելը:

Հանրակրթական դպրոցի մանկավարժները իրենց սովորելու տարիներին մանկավարժական բուհում չեն անցնում պրակտիկա (միայն սեմինարներ և ստուգարք), իրենց գործունեության ընթացքում չեն բախվում զարգացման խաթարում ունեցող երեխաների:

Հանրակրթական դպրոցի մանկավարժները ունեն շտկող մանկավարժության բնագավառում փորձի և գիտելիքների սուր դեֆիցիտ, ինչի հետևանքով նրանք պատրաստ չեն իրենց ամենօրյա աշխատանքում կիրառել ուղղիչ մանկավարժության տարրեր:

Ուսուցիչների մոտ շտկողական մանկավարժության բնագավառում որակավորման բարձրացումը կարող է զգալիորեն փոխել մանկավարժների դիրքորոշումը ներառական կրթության նկատմամբ:

«Որքանով է ձեզ հայտնի տարբեր խախտումներ ունեցող երեխաների զարգացման առանձնահատկությունները» հարցին մանկավարժներից ստացված պատասխանները միանգամայն ցույց են տալիս ուսուցիչների վերապատրաստման և զարգացման խանգարում ունեցող երեխաների հոգեբանա-մանկավարժական հատկանիշների ծանոթացման անհրաժեշտությունը:

1.3 Ներառական կրթությունը Հայաստանում

Հայաստանի կառավարությունը ևս դրական քայլեր է ձեռնարկել երեխաների կրթության իրավունքն իրացնելու նպատակով:

Հայաստանում ներառական կրթության համակարգը որպես ազգային քաղաքականություն, պաշտոնապես ընդունվել է 2003 թ.-ին: Այդ ժամանակից ի վեր տեղական և միջազգային բազմաթիվ կազմակերպություններ նախաձեռնել են նոր ընդունված համակարգին համահունչ զանազան ծրագրեր՝ ուսուցիչներին և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին օժանդակելու համար: Այդ ջանքերի շնորհիվ այսօր շատ դպրոցներ ապահովում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը, սակայն ուսուցիչներից քչերն են մասնակցել այնպիսի վերապատրաստման կամ կրթական ծրագրերի, որոնք թույլ կտան հանրակրթական դասարաններում իրականացնելու այդ երեխաների կրթական կարիքներին համապատասխան ռազմավարություններ և ծառայություններ: ⁴

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է

⁴ Ներառական կրթության ռազմավարություններ, դասագիրք, 2019, էջ 4:

յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը:

Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

- Կկիրառվի երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:
- Մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում՝ առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվելու է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի:

Եթե տվյալ մարզում առկա չէ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, ապա մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի

կարող է վերակազմակերպվել կամ պատվիրակվել այնպիսի կազմակերպության, որում առկա են ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ:

Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվել են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվելու է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգի (*ՀՀ կառավարության 16 փետրվարի 2017 թվականի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N 46-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 141-Ն որոշում*):

Մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի (ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի արձանագրային որոշում՝ «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին եվ ժամանակացույցին հավանություն տալու մասին»):

2015թ. փետրվարի 17-ի ՀՀ վարչապետի N108-Ա որոշմամբ հաստատվել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը»:

Նոր ձևավորված համակարգը հնարավորություն կընձեռի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություն: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության համակարգ բոլոր հանրակրթական դպրոցներում:⁵

Հայաստանի տարածքում առկա 1464 դպրոցներից միայն 291-ն են պաշտոնապես համարվում ներառական կրթություն իրականացնող: Սա կազմում է առկա դպրոցների մոտ 20 տոկոսը: Այս դպրոցների մեծ մասը Երևանում են: Մինչդեռ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) համաձայն, 2016թ. դրությամբ Հայաստանում ապրում է հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան 8016 մարդ: 2012թ. ՀՀ կրթության և գիտության նախարարը հայտարարել էր, որ այլևս գոյություն չեն ունենալու ներառական կրթություն իրականացնող և չիրականացնող դպրոցներ: Այսինքն, Հայաստանում գործող բոլոր հանրակրթական դպրոցները մինչև 2025թ. պետք է դառնան ներառական, հասանելի և մատչելի լինեն բոլոր երեխաների համար: Սակայն ներառական դպրոցների աճի դինամիկան ցույց է տալիս, որ գործընթացը շատ դանդաղ է առաջ ընթանում: Տարեկան միջինը 16 դպրոցում է անցում կատարվում ներառական կրթության, բացառությամբ 2015 և 2016 թթ., երբ ներառական կրթություն սկսեցին իրականացնել համապատասխանաբար 43 և 72 դպրոցներ:

Ըստ Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրության, Հայաստանում գործում է ոչ թե ներառական, այլ ինտեգրված կրթություն: Այսինքն, ԿԱՊԿՈՒ երեխան ինտեգրվում է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում: Ուսուցիչները բավարար ժամանակ չեն տրամադրում երեխայի հետ աշխատանքին: Թույլ է ծնողների հետ համագործակցությունը: Հասարակության մի հատվածը կարծրատիպային վերաբերմունք է դրսևորում ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում բացակայում են տարրական պայմանները հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Դպրոցները չունեն մատչելի թեքահարթակներ, սանհանգույցներ, ինչպես նաև համապատասխան մասնագետ-ուսուցիչներ: Ենթակառուցվածքի բացակայության, մանկավարժական

⁵ <https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu>

անձնակազմին չվստահելու, հասարակության կարծրատիպային մոտեցման պատճառով ծնողների մի մասը ձգտում է երեխային թաքցնել շրջապատից, չուղարկել դպրոցական կրթության:⁶

1.4 Արդյունավետ ներառումը մաթեմատիկայի դասաժամերին

Փորձարարական-հետազոտական աշխատանքների կատարման ընթացքում զարգանում են աշակերտների գործնական հմտություններն ու կարողությունները, առաջանում է վստահություն իրենց ունեցած գիտելիքների նկատմամբ, կարողանում են մեկնաբանել կատարված աշխատանքների իմաստն ու նպատակը:

11-րդ դասարանում երկրաչափություն առարկայից անցկացրել եմ «Գլանի մակերևույթի մակերեսը» փորձարարական դասը: Այդ դասարանում ներառման խնդիր ունի Աբրահամյան Գարիկը: Նա ունի հենաշարժողական խնդիրներ, մտածում է մի քիչ դանդաղ, բայց ճիշտ: Դասի նպատակը սահմանելիս ուշադրություն եմ դարձրել ներառման խնդիրները: Փորձել եմ հնարավորինս Գարիկին ներգրավվել դասապրոցեսի մեջ:

Դասի նպատակները հետևյալն էին՝

1. Զարգացնել ինքնուրույն աշխատելու, ընկերների հետ համագործակցելու, համաձայնության գալու կարողություն , ձևավորել սեփական կարծիքը հայտնելու մշակույթ,ստեղծել փոխօգնության առողջ մթնոլորտ:

2. Կարողանալ հաշվել գլանի կողմնային և լրիվ մակերևույթների մակերեսները, սահմանել գլանի առանցքային հատույթի հասկացությունը, գլան, սահմանել կողմնային մակերևույթ հասկացություն:

3. Իմանալ «հավասարակողմ գլան» հասկացության մասին

2. Զարգացնել գործնական, համագործակցային հմտություններ:

3. Ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-երի կիրառման շնորհիվ բարձրացնել դասի արդյունավետությունը:

4. Կիրառել ուսուցանող գնահատում:

5. Զարգացնել գնահատման հմտություններ:

⁶ <https://ampop.am/inclusive-education-in-armenia/>

6. Ամրապնդել միմյանց հետ հաղորդակցվելու կարողությունները:

Անհրաժեշտ սարքավորումներն են՝ համակարգիչ, ինքնուրույն պատրաստված գլանի մոդել, մետաղաթիթեղ, պաստառներ, A4 ֆորմատի թուղթ, քանոն:

Դասի ավարտին սովորողը կկարողանա.

1. Բացատրել, թե ինչ է իրենից ներկայացնում պտտական մարմիններ:

2. Կկարողանան ճիշտ ներկայացնել գլանի մակերևույթի փովածքը: Ապացուցել $S_1=2\pi rh$

3. Կարողանալ հաշվել գլանի մակերևույթի մակերեսի վերաբերյալ խնդիրներ:

4. Կարողանալ հաշվել գլանի լրիվ մակերևույթի մակերեսի հաշվման բանաձևը՝ $S_1=2\pi r(r+h)$

5. Կկարողանան համագործակցել թիմային աշխատանքով, արժևորեն մեկը մյուսի կատարած աշխատանքը, վեր հանեն թույլ տրված վրիպումները, հմտորեն շտկեն դրանք:

Դասի խթանման փուլում կատարել եմ նախորդ նյութի կրկնություն՝ ուղիղ գլան, գլանի ծնորդ, բարձրություն, հիմք, ընդհանրացում և ամփոփում, տնային առաջադրանքում առաջացած հարցերի վերլուծում և քննարկում:

Իմաստի ընկալման փուլում Դասարանի աշակերտներին բաժանել եմ 2 խմբի հետևյալ սկզբունքով՝ ընտրել առավել գիտակ աշակերտներ, որպես խմբի ավագներ, ապա տալ նրանց հնարավորություն հերթով ընտրելու իրենց խմբի մյուս անդամներին:

Խմբերը ստացել են իրենց հանձնարարությունները՝ համակարգչով ցույց տալ գլանի փովածքի վերաբերյալ նյութեր և պատրաստել գլան:

1. Առաջին խումբ հաշվի գլանի կողմնային մակերևույթի մակերեսը

2. երկրորդ խումբը հաշվի գլանի լրիվ մակերևույթի մակերեսը:

Իսկ Գարիկն հանձնարարվեց պատրաստել գլան, օգտագործելով A4 ֆորմատի թուղթ:

Այնուհետև յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր նյութը, որը հանձնարարված էր նախապես և որը ցույց են տալիս պաստառի և սահիկների միջոցով:

Սովորողները աշխատում են 20 րոպե, ընդգրկված են խնդիրներ, նրանք A4 ֆորմատի թղթերով պատրաստում են գլանի փովածքը և դուրս են բերում համապատասխան բանաձևերը և նախորոք հանձնարարված մետաղալարերով պատրաստված գլանի միջոցով հաշվում S_1 և S_2 :

Կշռադատում- ինչքանով հասանք նպատակին, արտահայտվում են երեխաները: Խմբերը քանոնի միջոցով կատարում են գլանի համապատասխան չափումներ և տեղադրելով արդեն դուրս բերված բանաձևերի մեջ հաշվում կողմնային և լրիվ մակերևույթների մակերեսները:

Այնուհետև առաջին խումբը լուծում է դասի 1-ին խնդիրը, իսկ երկրորդ խումբը՝ 2-րդ խնդիրը:

Հատուկ ուշադրության ներկայացվեց Գարիկի պատրաստած գլանը, որը շատ կոկիկ էր և գեղեցիկ: Նա ոգևորվել է ստացված արդյունքից:

Գնահատում- ինչպես են արժևորում միմյանց աշխատանքները: / ձևավորող գնահատում/ : Առկա է նաև գնահատման սանդղակ:

- ⊗ Ի՞նչ սովորեցինք այսօր:
- ⊗ Ինչպե՞ս սովորեցինք:
- ⊗ Այսօրվա սովորածը որտե՞ղ կարելի է կիրառել:

Լսեցի աշակերտների կարծիքը, թե խմբային աշխատանքի ժամանակ նրանցից, ով էր ավելի արագ կողմնորոշվում առաջադրանքներ կատարելիս ու խնդիրներ լուծելիս, ով եղավ նախաձեռնող, ով նպաստեց խմբի արդյունավետ գործունեությանը, ով ստեղծեց համագործակցային մթնոլորտ և օգնեց ընկերներին:

Հաշվի է առնվել ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կարողություն ունեցող աշակերտների կարծիքները:

Առկա է նաև գնահատման սանդղակ:

Դիտարկումները գնահատել 4-5 աշակերտի՝ հիմնավորելով յուրաքանչյուրի գնահատականը:

Նախապես բացատրել եմ տնային հանձնարարությունը և հանձնարարել լուծել խնդիր 6 ա-դ, 10ա,բ- առավել թույլ կարողություն ունեցող աշակերտները:

6-12 խնդիրները ուժեղ կարողություն ունեցող աշակերտներ:

Սովորել դասի բանաձևերը և այն բացատրել բառերով:

Հաշվի առնելով ներառական կրթության առանձնահատկությունները, կարողացա կազմակերպել հետազոտական-փորձարական դաս, որը հասավ իր նպատակին: Գարիկի պատրաստած գեղեցիկ գլանի միջոցով աշակերտները բացատրեցին և ցուցադրեցին իրենց հանձնարարված առաջադրանքները: Նրանք կարողացան արդյունավետ հաղորդակցվել և ստեղծել ջերմ մթնոլորտ, որի արդյունքում ամբողջ դասարանը ներգրավվեց դասապրոցեսին: Արդյունքում դասը անցավ հետաքրքիր և եղավ տարբերվող: Դասի արդյունավետությունը հրաշալի էր:

Ուսուցիչները, որոնք ունեն ներառական կրթական համակարգում աշխատելու արդյունավետ փորձ, առաջարկում են ներառելու հետևյալ եղանակները.

1. Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներին ընդունել այնպես, «ինչպես մնացած բոլոր երեխաներին դասարանում»;
2. Ընդգրկել նրանց նույն գործունեության մեջ, սակայն նրանց առաջ դնել տարբեր խնդիրներ;
3. Ներգրավել երեխաներին խմբային աշխատանքներում;
4. Օգտագործել ակտիվ ուսումնական ձևեր և խաղեր, ծրագրեր, հետազոտություններ դպրոցից դուրս:

Պետք է ասել, որ ներառական կրթության ներմուծումը դպրոց մեծապես փոխում է ուսուցչի դերը:

Ուսուցիչները աշակերտների հետ ներգրավվում են տարաբնույթ շփումների մեջ, ինչի շնորհիվ էլ ճանաչում են յուրաքանչյուրին անհատապես: Բացի այդ մանկավարժները դպրոցից դուրս ներգրավված են ավելի լայն սոցիալական շփումների, որոնց թվին են պատկանում սոցիալական աջակցության ռեսուրսները և ծնողների հետ շփումը: Նման մասնագիտական դիրքորոշումը ուսուցիչներին թույլ է տալիս հաղթահարել իրենց մտահոգությունը և անհանգստությունը, հասնել մասնագիտական հմտության միանգամայն նոր մակարդակի՝ հասկանալով իր աշակերտներին և իր կոչումը:

Եզրակացություն

Այսպիսով, ներառման գործընթացը հանդիսանում է իր յուրաքանչյուր մասնակցի ակադեմիական և հասարակական կյանքի բարձրացման աստիճան և հանդես է գալիս դպրոցում տեղի ունեցող բոլոր գործընթացներում սովորողների ակտիվությունն ապահովող միջոց:

Ներառման միջոցով վերակառուցվում է դպրոցի մշակույթը, նրա ներքին կանոնները, կանոնակարգերը և պրակտիկան և հնարավորություն ստեղծում լիարժեքորեն ընդունել սովորողների՝ իրենց յուրահատուկ առանձնահատկություններով և կարիքներով հանդերձ:

Բավարարելու համար մարդկանց զանազան կրթական պահանջներ ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխություններն ավելի արդյունավետ դարձնեն ուսուցումը, ապա կշահեն ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները երեխաները:

Ներառումը անմիջականորեն առնչվում է ոչ միայն խոցելի խմբին, այլ նաև դպրոցում սովորող բոլոր երեխաներին: Այն ենթադրում է սերտ, ընկերության վրա հիմնված հարաբերություններ ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների և դպրոցի ու համայնքի միջև (որտեղ այդ դպրոցները կան և գործում են):

Հանրակրթական դպրոցի մանկավարժների կարևորագույն խնդիրն է՝ կարողանալ աշխատել կրթական տարբեր հնարավորություններ ունեցող երեխաների հետ և հաշվի առնելով նրանց յուրահատկությունները՝ յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերել հատուկ մանկավարժական մոտեցում:

Սակայն մանկավարժների համար հիմնական հոգեբանական «արգելք» է հանդիսանում վախը անհայտի, վախը ներառման գործընթացի մյուս մասնակիցներին վնասի, բացասական դիրքորոշումները և նախապաշարումները, մանկավարժների մասնագիտական անվստահությունը, փոխվելու դժկամությունը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու հոգեբանական անպատրաստվածությունը: Սա լուրջ խնդիր է ներառական կրթության սկզբունքներն իրականացնող կրթական հաստատությունների ղեկավարների առջև:

Գրականության ցանկ

1. ՀՀ Օրենքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին:
2. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Երևան 2013:
3. Ներառական կրթության ռազմավարություններ, դասագիրք, 2019, 252էջ:
4. Պետրոսյան Սյուզաննա, Ներառական կրթությունը գործնականում, Երևան 2018, էջ 7:
5. <http://school170.safe.am/>
6. <https://escs.am/am/>
7. <https://www.unicef.org/>
8. <https://ampop.am/inclusive-education-in-armenia/>